



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/7785/05/19

Նախագահող դատավոր՝ Ռ. Մախմուդյան

Դատավորներ՝ Կ. Ավետիսյան

Հ. Այվազյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7785/05/19
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
գեկուցող Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի ապրիլի 30-ին

գրավոր ընթացակարգով քննելով Աիդա Բարսամյանի, Սյուզաննա Ղազարյանի և «Աիդա-Էմիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.02.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Աիդա Բարսամյանի, Սյուզաննա Ղազարյանի և «Աիդա-Էմիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և Կադաստրի կոմիտեի, երրորդ անձ՝ «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ 05.04.2002 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, առ ոչինչ ճանաչելու, որպես հետևանք՝ 27.01.2006 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետի կողմից 22.09.2017 թվականին կայացված թիվ 3280-Ա՝ Հրազդանի կիրճում «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրված հողամասի սահմանները վերաճշտելու մասին որոշումը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված

շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, անվավեր ճանաչելու, 27.04.2018 թվականին Երևան համայնքի և «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագիրը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, անվավեր ճանաչելու, 27.04.2018 թվականին Երևան համայնքի և «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի հիմքով տրված 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, անվավեր ճանաչելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Հայցվորները պահանջել են առ ոչինչ ճանաչել 05.04.2002 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 27.01.2006 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, Երևանի քաղաքապետի կողմից 22.09.2017 թվականին կայացված թիվ 3280-Ա՝ Հրազդանի կիրճում «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրված հողամասի սահմանները վերաճշտելու մասին որոշումը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, 27.04.2018 թվականին Երևան համայնքի և «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագիրը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով, 27.04.2018 թվականին Երևան համայնքի և «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի հիմքով տրված 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Դ. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան) 04.11.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2024 թվականի որոշմամբ Կադաստրի կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի և երրորդ անձ «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 04.11.2022 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայցվորները (ներկայացուցիչ՝ Վազգեն Թադևոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ներկայացուցիչ՝ Մուշեղ Խաչիկյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը և 13-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Բողոքաբերները նշված պնդումը պարզառաքանել են հետևյալ փաստարկներով.

Իրավունքի պետական գրանցման համար հիմք հանդիսացող Երևանի քաղաքապետի կողմից 18.04.2001 թվականին կայացված թիվ 358 որոշման 4.1-ին կետի համաձայն՝ «Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության հետ 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած»:

Երևանի քաղաքապետի կողմից 18.04.2001 թվականին կայացված և ուժը կորցրած թիվ 358 որոշման հիման վրա՝ 05.04.2002 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցվել է «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքը՝ 0,2050հա հողամասի նկատմամբ: Ստացվում է, որ որպես պետական գրանցման իրավական հիմք՝ վարձակալության իրավունքի վկայականում նշված է եղել ուժը կորցրած, գոյություն չունեցող վարչական ակտը:

Ստացվում է, որ 05.04.2002 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի վարձակալության իրավունքի պետական գրանցումն առ ոչինչ է, քանի որ դրա հիմքում ընկած է ուժը կորցրած կամ իրավաբանորեն գոյություն չունեցող վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ պետական գրանցումը կատարվել է առանց որևէ իրավահաստատող փաստաթղթի կամ իրավական հիմքի, հետևաբար՝ դրա հասցեատիրոջը տրամադրվել է ակնհայտորեն ոչ իրավաչափ իրավունք:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը ոչ թե պետք է կայացներ վերջնական՝ համահայցվորների պահանջը մերժող դատական ակտ, այլ՝ սխալ ընտրված դատավարական ճանապարհով իրավունքի պաշտպանություն հայցելու հանգամանքը արձանագրելով հանդերձ, պետք է Հայցվորներին չգրկեր իրենց դատական պաշտպանության հնարավորությունից: Արդյունքում Վերաքննիչ դատարանը, սահմանադրորեն ամրագրված արդար դատաքննության իրավունքի գերակայության պայմաններում և դրա՝ անհամաչափ և անհարկի ձևով որևէ դեպքում չսահմանափակելու և չխոչընդոտելու անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման համատեքստում պետք է գործն ուղարկեր նոր քննության՝ համահայցվորներին ընձեռելով սխալ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոփոխելու հնարավորություն, քանի որ հենց Վերաքննիչ դատարանն է արձանագրել, որ Համահայցվորներն ի սկզբանե ճիշտ հայցատեսակ են ներկայացրած եղել և միայն Դատարանի ենթադրյալ սխալ մատնանշումից հետո են միայն փոփոխել հայցատեսակը և հայցապահանջը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերները պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-006-3-2 մատյանի 00146 համարի տակ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքների գրանցման ակտից հստակ երևում է և միանշանակ պարզ է, թե որ վարչական մարմինն է այն ընդունել:

Պարզ է նաև, թե որն է պետական գրանցման ակտի օբյեկտն ու սուբյեկտը, այսինքն՝ միանշանակ պարզ է, թե այդ ակտը ում է հասցեագրված և ինչ հարց է կարգավորում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-006-3-2 մատյանի 00146 համարի տակ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքների գրանցման ակտով դրա հասցեատիրոջը տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, ապա պետք է փաստել, որ Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի թիվ 358 որոշմամբ արձանագրվել է, որ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ին Հրազդանի կիրճում «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով հողամաս հատկացնելու հիմք են հանդիսացել «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի հայտը, Կենտրոնի թաղապետարանի 30.03.2001 թվականի հ.23/33-128/272 գրությունով և Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 02.03.2001 թվականի հ.18-11/1038 եզրակացությամբ ներկայացված դրական կարծիքն ու եզրակացությունը, ինչպես նաև հղում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրին, ՀՀ կառավարության 08.12.1997 թվականի թիվ 565 որոշմանը և Երևանի քաղաքապետի 15.06.1999 թվականի հ.822 և 19.05.2000 թվականի հ.556 որոշումներին, որոնցով «Ակումբ համալիր» ՍՊԸ-ին Հրազդանի կիրճում հատկացված հողամասում կառուցված «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով որոշում է կայացվել վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով հատկացնել 200քմ մակերեսով հողամաս: Այսինքն՝ առկա է եղել կողմերի փոխադարձ կամահայտնություն՝ մի կողմից հողամասը վարձակալության իրավունքով տրամադրել, մյուս կողմից՝ վարձակալել, ինչի մասին վկայում են համապատասխան գործարքի կնքմանն ուղղված՝ կողմերի նախորդ և հետագա գործողությունները:

Ընդ որում, իրավունքի պետական գրանցման հիմք հանդիսացող փաստաթղթերի և կադաստրային գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պետական գրանցումն իրականացնող մարմինն ներկայացվել է նաև «Հողի վարձակալության» 22.02.2002 թվականի թիվ 215/Գ-Ա պայմանագիր:

Բացի այդ, գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ հողհատկացման որոշումն ուժը կորցրած է ճանաչվել Երևանի քաղաքապետի մեկ այլ որոշմամբ: Իսկ որոշման 4-րդ կետի բովանդակությունից չի հաստատվում, որ 60-օրյա ժամկետի սկիզբը պետք է հաշվարկել որոշման կայացման պահից, այն է՝ 18.04.2001 թվականից:

Իսկ նման պայմաններում, երբ չեն գործել ո՛չ ՀՀ հողային օրենսգիրքը, ո՛չ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, և ո՛չ էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-006-3-2 մատյանի 00146 համարի տակ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքների գրանցման ակտով դրա հասցեատիրոջը ոչ իրավաչափ իրավունք տրամադրվելու ակնհայտ լինելու մասին պնդումն անհիմն է:

Այսինքն՝ ի սկզբանե ներկայացված հայցով պահանջները ներկայացվել են վիճարկման հայցատեսակի շրջանակներում, որի դեպքում, ի տարբերություն ճանաչման հայցատեսակի, Հայցվորները պարտավոր էին հիմնավորել, թե Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի թիվ 385 որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված հողհատկացման վերաբերյալ կատարված պետական գրանցմամբ Հայցվորների որ իրավունքն է խախտվել, և ինչպես է դա արտահայտվում, ինչը Հայցվորները չէին հիմնավորել: Մինչդեռ միայն այդ փաստերի առկայության և հաստատման դեպքում հնարավոր կլիներ արձանագրել Հայցվորների իրավունքների խախտման փաստը և իրական վեճի առկայության հանգամանքը, ինչպես նաև Հայցվորների շահագրգռվածության հանգամանքը:

Վարչական դատարանն էլ, վերոշարադրյալի հաշվառմամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում մատնանշել էր Հայցվորներին հայցատեսակի փոփոխության հնարավորությունը, ինչը, թերևս, որևէ կերպ չի կաշկանդել հայցվոր կողմի՝ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը:

Այնուհետև, հայցվոր կողմը, իրացնելով և տնօրինելով հայցատեսակի ընտրության իր սուբյեկտիվ իրավունքը, 03.06.2022 թվականին հրավիրված նախնական դատական նիստի ընթացքում ներկայացրել է հայցի առարկան և հիմքերը փոփոխելու մասին միջնորդություն, որում մեջբերելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ, 63-րդ, 66-րդ հոդվածների դրույթները, պահանջել է առ ոչինչ ճանաչել 05.04.2002 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցումը /հիմնական պահանջ/, որի քննության համար առաջին ատյանում պարզված փաստական հանգամանքները լիովին բավարար էին, ուստի և վերաքննիչ ատյանում գործի քննության ժամանակ կիրառելի է եղել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի ««Ակումբ համալիր» ՍՊԸ-ին Հրազդանի կիրճում «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով հողամաս հատկացնելու մասին» թիվ 358 որոշմամբ, հաշվի առնելով «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի հայտը, Կենտրոնի քաղաքատարանի 30.03.2001 թվականի հ.23/33-128/272 գրությունով ներկայացված դրական կարծիքը և Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 02.03.2001 թվականի հ.18-11/1038 եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով և ՀՀ կառավարության 15.06.1999 թվականի թիվ 822 և 19.05.2000 թվականի թիվ 556 որոշմամբ՝ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ին (...) Հրազդանի կիրճում Երևանի քաղաքապետի 15.06.1999 թվականի հ.822 և 19.05.2000 թվականի հ.556 որոշումներով հատկացված հողամասում կառուցված «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով հատկացվել է 200քմ մակերեսով հողամաս: Նույն որոշմամբ Երևանի քաղաքապետը լիազորել է Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը Երևանի քաղաքապետի անունից կառուցապատողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր: Նույն որոշման 4.1-ին կետով

սահմանվել է, որպես ի գիտություն՝ Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության հետ 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած (**հատոր 2-րդ, գ.թ. 82**).

2. «Հողի վարձակալության» 22.02.2002 թվականի թիվ 215/Գ-Ա պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի, որի անունից հանդես է եկել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Գևորգյանը, (...) մի կողմից, և «Ակումբ համալիր» ՍՊ ընկերությունը (...), մյուս կողմից Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի թիվ 358 որոշման հիման վրա կնքել են նույն պայմանագիրը, որով վարձատուին համապատասխան վարձավճարի դիմաց վարձատուի տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրել Հրազդանի կիրճում 200քմ հողամաս: Հողամասը հատկացվել է կանաչապատման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով՝ 25 տարի ժամկետով (**հատոր 2-րդ, գ.թ. 83-85**).

3. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.04.2002 թվականի թիվ 502151 վկայականի համաձայն՝ «Կենտրոն համայնքի Հրազդանի կիրճ» հասցեում գտնվող 0,2050հա մակերեսով հողամասի և 163,1քմ մակերեսով շենքի ու 18,3քմ մակերեսով շինության նկատմամբ Երևանի քաղաքապետի 19.05.2000 թվականի թիվ 556 և 18.04.2001 թվականի թիվ 358 որոշումների, 11.12.2000 թվականի թիվ 1-40 նախագծի, 18.12.2000 թվականի թիվ 23/35-196 շինարարության թույլտվության, 15.09.2000 թվականի և 02.07.2001 թվականի գլխավոր հատակագծի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-006-3-2 մատյանի 00146 համարի տակ գրանցվել է «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 86-88**).

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի խախտում թույլ տալու հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- կարող է արդյո՞ք ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը բողոքի քննության արդյունքում կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վարչական դատարանի դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը, այնպիսի պայմաններում, երբ ՀՀ վարչական դատարանը չի կատարել ոչ ճիշտ հայցադրեսակը պարշաճ հայցադրեսակով փոխարինելու առաջարկ անելու իր պարտականությունը՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում արտահայտած դիրքորոշումներում արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները

պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ նման իրավիճակներում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*“ex officio”*) սկզբունքի ուժով ոչ ճիշտ հայցապահանջը ճշտելու վերաբերյալ վարչական դատարանի կողմից հայցվորին առաջարկ ներկայացնելու և հայցվորի կողմից դատարանի նշված առաջարկն ընդունվելու դեպքում տեղի է ունենում ոչ թե հայցի առարկայի կամ հայցային պահանջների չափի փոփոխություն, այլ ներկայացված հայցապահանջի ճշգրտում և համապատասխանեցում հայցվորի իրական կամարտահայտությանն ու դատական պաշտպանության դիմելիս վերջինիս հետապնդած իրական նպատակին (*տե՛ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** (*“ex officio”*) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն **ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով**, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն. այս դատավարական սկզբունքը **վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ** թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել (*տե՛ս, ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է նաև, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** (*“ex officio”*) սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** (*“ex officio”*) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատարանը պարտավոր է

ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանը մի կողմից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով:

Փաստորեն, վարչական դատավարությունում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** ("ex officio") սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ (տե՛ս Ա/Ձ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Ներկայացված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրացման առանձնահատկություններին՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածը: Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության, և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնելով անփոփոխ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի վերաքննության արդյունքում ՀՀ վերաքննիչ դատարանն իրացնում է վարչական դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը և կայացնում է նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են

տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, այսինքն՝ նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը կարող է հանդիսանալ բավարար և անհրաժեշտ պայման ՀՀ վարչական դատարանի դատական ակտը փոփոխելու համար:

Անդրադառնալով նոր քննության լիազորության իրացմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ դեպքերում, անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների պաշտպանությունը, ինչպես նաև դատարանների միջև ձևավորված գործառության կապի սկզբունքի արդյունավետ կենսագործումը կարող է ապահովվել միայն վերադաս դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու արդյունքում՝ երաշխավորելով նաև վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը (տե՛ս, «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության թիվ ՎԴ/1244/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2024 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը չի կարող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել ՀՀ վարչական դատարանի դատական ակտը, եթե ՀՀ վարչական դատարանը չի կատարել ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու իր պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Հայցվորների կողմից ներկայացված ճանաչման հայցի հիման վրա, որով վերջիններս որպես հիմնական պահանջ՝ խնդրել են առ ոչինչ ճանաչել 05.04.2002 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցված «Ակումբ համալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարձակալության իրավունքը՝ 02.07.2018 թվականի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականին կցված շինությունների հատակագծում նշված մակերեսի չափով:

Դատարանը բավարարել է Հայցվորների հայցը հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման հիման վրա խնդրո առարկա հողամասի նկատմամբ 05.04.2002թ. «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության անվամբ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումով «Ակումբ համալիր» ՍՊ ընկերությանը տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Մասնավորապես՝ Դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշմամբ թեև «Ակումբ համալիր» ՍՊ ընկերությանը Երևան քաղաքի Հրազդանի կիրճում «Մոնրե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապարման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով հատկացվել է 200քմ մակերեսով հողամաս, այնուամենայնիվ նույն որոշմամբ հստակ ամրագրվել է, որ ընկերության կողմից Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության հետ 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում տվյալ որոշումը համարվում է ուժը կորցրած, իսկ նշված որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետ Ռ.Նազարյանի, որի անունից հանդես է եկել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Գևորգյանը, և

«Ակումբ համալիր» ՍՊ ընկերության միջև հողի վարձակալության թիվ 215/Գ-Ա պայմանագիրը կնքվել է միայն 22.02.2002թ., այսինքն՝ Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման ընդունումից մոտ 10 ամիս հետո, այնուհետև՝ նշված որոշման հիման վրա խնդրո առարկա հողամասի նկատմամբ «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցումը կատարվել է 05.04.2002թ., այսինքն՝ Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման ընդունումից ավելի քան 11 ամիս հետո, որպիսի պայմաններում Դատարանը փաստում է, որ խնդրո առարկա հողամասի նկատմամբ «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցումը կատարվել է այդ պահի դրությամբ արդեն իսկ ուժը կորցրած՝ Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման հիման վրա: Ընդ որում, Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի, իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ տվյալ գրանցման առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալով, այն է՝ ուժը կորցրած Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման հիման վրա խնդրո առարկա հողամասի նկատմամբ կատարվել է «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքի պետական գրանցում: Ավելին՝ Երևանի քաղաքապետի 18.04.2001թ. թիվ 358 որոշման՝ 05.04.2002թ. դրությամբ ուժը կորցրած լինելու հանգամանքը գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնի համար եղել է ակնհայտ՝ նկատի ունենալով, որ նշված որոշման հիման վրա Երևան քաղաքի Հրազդանի կիրճում գտնվող վիճելի հողամասի վերաբերյալ վարձակալության պայմանագիրը կնքվել է նույն որոշմամբ ամրագրված 60-օրյա ժամկետի ակնհայտ խախտմամբ, այն է՝ մոտ 10 ամիս հետո»:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Կադաստրի կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի և երրորդ անձ «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը, Դատարանի վճիռը բեկանել և փոփոխել է՝ Հայցվորների հայցը մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Համահայցվորների կողմից փաստացի վիճարկվել է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը: Ավելին, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը Համահայցվորները իրենք պայմանավորել են ոչ թե ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց վարչական ակտերի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու, այլ այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ենթակա է ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ուստի ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած վերը նշված իրավական դիրքորոշումների և իրավական վերլուծության հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ սույն գործով խնդրո առարկա հանդիսացող 05.04.2002 թվականի գրանցումը (վարչական ակտը) չի կարող դիմել առոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր: Ընդ որում, հարկանշական է նաև այն հանգամանքը, որ Համահայցվորների կողմից ի սկզբանե ներկայացված է եղել նաև վիճարկման հայց, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել հիշյալ գրանցումը, սակայն Դատարանի կողմից մատնանշում կատարելուց հետո Համահայցվորները լրացրել են հայցի հիմքերը և փոխել են հայցի առարկան պահանջելով խնդրո առարկա գրանցումը ճանաչել առոչինչ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Համահայցվորների կողմից վարչական ակտն առոչինչ ճանաչելու պահանջի հիմքում դրված հիմնավորումները ոչ թե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու, այլ անվավեր ճանաչելու հիմքեր են, քանի որ տվյալ դեպքում վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն

դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա չեն վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու վերը նշված հիմքերը, ուստի Համահայցվորների կողմից ներկայացված հայցը հիմնական պահանջի մասով ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանի կողմից:

(...)

Վերը նշվածի հաշվառմամբ անդրադառնալով բողոքաբեր երրորդ անձ «Ակումբ համալիր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վերջին փաստարկին, առ այն, որ Դատարանը, բավարարելով հիմնական պահանջը, որպես հետևանք անվավեր է ճանաչել 27.01.2006թ. Կադաստրի կոմիտեի կողմից կատարված պետական գրանցումն այն պայմաններում, երբ այդ գրանցումը ճանաչվել է ուժը կորցրած նույն տարածքի սահմանները ճշտելուց հետո կատարված նոր պետական գրանցմամբ, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ բողոքաբերի փաստարկն իրավաչափ է այնքանով, որ 27.01.2006թ. գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու պայմաններում (02.07.2018թ. տվյալ հոդամասի նկատմամբ կատարվել է իրավունքի նոր պետական գրանցում) այն չէր կարող անվավեր ճանաչվել:

(...)

Հիմք ընդունելով վերը նշված իրավանորմերն ու դրանց հիման վրա կատարված եզրահանգումները՝ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափ է համարում Դատարանի կողմից վճռում կատարված եզրահանգումները, առ այն, որ հայցը ենթակա է բավարարման, ինչպես նաև վերոգրյալ իրավական և փաստական հիմնավորումների հաշվառմամբ՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ներկայացված վերաքննիչ բողոքները ենթակա են բավարարման, իսկ ՀՀ վարչական դատարանի կողմից սույն վարչական գործի շրջանակներում 04.11.2022 թվականին կայացված վճիռը քեկանման»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր:

Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները), ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված ճանաչման հայցը, որի 2-րդ մասով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Այսպիսով, վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն, իսկ ճանաչման հայցն ուղղված է օրենքով նախատեսված համապատասխան

հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի՝ դատական կարգով առոչինչ լինելու փաստը հաստատելուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի առոչնչության և անվավերության հիմքերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 62-րդ և 63-րդ հոդվածներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

(...)

դ) **ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման, իսկ 3-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է.

- օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով,

- կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական ակտի առոչնչության հիմքերին, իր 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է **ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը:**

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերին, եզրահանգել է, որ ոչ իրավաչափ վարչական ակտերը կարող են հանդես գալ երկու ձևով՝ որպես օրենքին (գերակայող իրավունքին) հակասող և որպես առոչինչ ակտեր:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրելով **վիճարկման** և **ճանաչման** հայցատեսակները՝ օրենսդիրը սահմանել է անվավեր և առ ոչինչ վարչական ակտերի ոչ իրավաչափ լինելը դատական կարգով հաստատելու երկու եղանակ: Ընդ որում, **վիճարկման հայցը** քննելիս դատարանը պարտավոր է նախևառաջ անդրադառնալ վարչական ակտի առոչնչության հիմքերի առկայությանը կամ բացակայությանը, քանի որ վարչական ակտի անվավերության նյութաիրավական հիմքերով պայմանավորված՝ անվավեր կարող է ճանաչվել միայն առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտը: Այսինքն՝ առ ոչինչ վարչական ակտի վերացման պահանջը չի կարող լինել վիճարկման հայցի առարկա, քանի որ անվավերության հիմքերի պարզման անհրաժեշտությունն առ ոչինչ վարչական ակտի պարագայում բացակայում է: Ավելին, եթե առկա է վարչական ակտի առոչինչ լինելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված հիմքերից

որևէ մեկը, ապա այդ վարչական ակտը չի կարող ճանաչվել անվավեր (տե՛ս, Գառնիկ Վերմիշյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականի որոշումը):

Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը նաև մեկ այլ վարչական գործով՝ մասնավորապես նշելով, որ նշված հայցատեսակներն իրենց մեջ ներառում են միմյանց բացառող տարրեր: Մասնավորապես վիճարկման հայցի առարկա կարող է լինել միայն այն վարչական ակտը, որն առ ոչինչ չէ: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքն ինքնին բացառում է վիճարկման հայցի հարուցումը և հետագա քննությունը: Համապատասխանաբար վարչական ակտի առ ոչինչ լինելու հիմքերի առկայության պարագայում վարչական ակտի օրենքին համապատասխանությունը չի կարող քննարկման առարկա դառնալ վիճարկման հայցի շրջանակներում, քանի որ ընդունման պահից իրավաբանական ուժ չունեցող և կատարման կամ կիրառման ոչ ենթակա վարչական ակտի օրենքին համապատասխանելն այլևս որևէ նշանակություն չի կարող ունենալ (տե՛ս, Հովհաննես Եղյան Նորք Մար Սուիթ կոոպերատիվի սնանկության գործերով կառավարիչն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԻ թիվ ՎԴ/10906/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.06.2022 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առոչինչ լինելու համար **էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը, կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը:** Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչինչ դիտելու համար: Այսինքն՝ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովորոսինվեստ» ՍՊԸ-ի՝ թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/7157/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, Ժիրայր Զոհրաբյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանման, Աննա Զոհրաբյանի, երրորդ անձ ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղական համայնքի թիվ ՎԴ-3/0233/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով նաև «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ոչ իրավաչափ է դիտում այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Այսինքն՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինի հետևյալ հիմքերից որևէ մեկը, այն է՝

«ա» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ կիրառմամբ, կամ

«բ» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ, կամ

«գ» ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ պետք է ընդունվեր այլ որոշում: Ընդ որում, վարչական ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Կամո Պետրոսյանի, «Դինո Գոլդ Մայնինգ Քամփինգ» ՓԲԸ-ի թիվ ՎԴ1/0143/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դատական կարգով հաստատվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված պայմաններից որևէ մեկի առկայությունը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվող վարչական ակտի առոչնչությունը պայմանավորվում է այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ենթակա է ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչնչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է ճանաչման հայց, սակայն հայցվորի կողմից վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա ՀՀ վարչական դատարանի կողմից հայցվորին մատնանշում չանելու փաստը դատական ակտի բողոքարկման փուլում բացառում է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորության իրացման համար օրենսդրի կողմից սահմանված պայմաններից մեկը, հետևաբար՝ նշված պարագայում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը պարտավոր է բեկանել ՀՀ վարչական դատարանի դատական ակտը և հայցի հիմք հանդիսացող մնացած փաստարկները քննարկման առարկա դարձնելու նպատակով գործն ուղարկել նոր քննության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի ««Ակումբ համալիր» ՍՊԸ-ին Հրազդանի կիրճում «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով հողամաս հատկացնելու մասին» թիվ 358 որոշմամբ, հաշվի առնելով «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի հայտը, Կենտրոնի թաղապետարանի 30.03.2001 թվականի հ.23/33-128/272 գրությունով ներկայացված դրական կարծիքը և Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 02.03.2001 թվականի հ.18-11/1038 եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով և ՀՀ կառավարության 15.06.1999թ. թիվ 822 և 19.05.2000թ. թիվ 556 որոշմամբ՝ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ին (...) Հրազդանի կիրճում Երևանի քաղաքապետի 15.06.1999թ. հ.822 և 19.05.2000թ. հ.556 որոշումներով հատկացված հողամասում կառուցված «Մոնտե Քրիստո» ռեստորանի դիմացի ափի կանաչապատման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով, վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով հատկացվել է 200քմ մակերեսով հողամաս: Նույն որոշմամբ Երևանի քաղաքապետը լիազորել է Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը Երևանի քաղաքապետի անունից կառուցապատողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր: Նույն որոշման 4.1-ին կետով սահմանվել է, որպես ի գիտություն՝ Երևանի քաղաքապետարանի

անշարժ գույքի կառավարման վարչության հետ 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

«Հողի վարձակալության» 22.02.2002 թվականի թիվ 215/Գ-Ա պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Երևանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի, որի անունից հանդես է եկել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Գևորգյանը, (...) մի կողմից, և «Ակումբ համալիր» ՍՊ ընկերությունը (...), մյուս կողմից Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի թիվ 358 որոշման հիման վրա կնքել են նույն պայմանագիրը, որով վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց վարձատուի տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրել Հրազդանի կիրճում 200 քմ հողամաս: Հողամասը հատկացվել է կանաչապատման, բարեկարգման և նվազախմբի բեմահարթակի շինարարության իրականացման նպատակով՝ 25 տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.04.2002 թվականի թիվ 502151 վկայականի համաձայն՝ «Կենտրոն համայնքի Հրազդանի կիրճ» հասցեում գտնվող 0,2050 հա մակերեսով հողամասի և 163,1քմ մակերեսով շենքի ու 18,3քմ մակերեսով շինության նկատմամբ Երևանի քաղաքապետի 19.05.2000 թվականի թիվ 556 և 18.04.2001 թվականի թիվ 358 որոշումների, 11.12.2000 թվականի թիվ 1-40 նախագծի, 18.12.2000 թվականի թիվ 23/35-196 շինարարության թույլտվության, 15.09.2000 թվականի և 02.07.2001 թվականի գլխավոր հատակագծի հիման վրա Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 01-006-3-2 մատյանի 00146 համարի տակ գրանցվել է «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի համապատասխանաբար վարձակալության և սեփականության իրավունքը:

Հայցվորները հիմնական պահանջով ներկայացրած ճանաչման հայցի առարկա հանդիսացող 05.04.2002 թվականի պետական գրանցման առ ոչինչ լինելը պայմանավորել են նշված գրանցման հիմքում որպես իրավահաստատող փաստաթուղթ՝ ուժը կորցրած ակտ դնելու հանգամանքով: Նշված փաստարկն ու դրա հիմնավորումները պահանջում են այդ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտություն, մասնավորապես՝ վիճարկվող գրանցման հիմքում ընկած փաստաթղթերի, ապացույցների, որոշակի հանգամանքների մանրամասն ուսումնասիրություն՝ պարզելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից վեճի առարկա գրանցման հիմքում իրավահաստատող փաստաթղթի իրավաբանական ուժ ունենալու հանգամանքը, ինչն արդեն իսկ բացառում է դրանց առ ոչինչ լինելը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույնիսկ եթե հաստատվի, որ վեճի առարկա գրանցման համար հիմք է ընդունվել իրավաբանական ուժ չունեցող որոշում, ապա այդ հանգամանքը դեռևս բավարար չէ իրավունքի պետական գրանցումն առոչինչ ճանաչելու համար, քանի որ նշած փաստը, նախ, պետք է հաստատվի դատարանի կողմից: Դեռ ավելին, վիճարկվող գրանցման համար, բացի Երևանի քաղաքապետի 18.04.2001 թվականի թիվ 358 որոշումից, հիմք են ընդունվել նաև այլ իրավահաստատող փաստաթղթեր:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը հայցվորները պայմանավորել են ոչ թե ակնառու կոպիտ սխալներով, այլ այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ենթակա է ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ուստի ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2014 թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումներում և սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ այդ վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայցվորների կողմից վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջի հիմքում դրված հիմնավորումները վերաբերում են ոչ թե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելուն, այլ՝ դրա ենթադրյալ անվավերությանը, քանի որ տվյալ դեպքում վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, որպիսի եզրահանգման իրավաչափորեն եկել է նաև Վերաքննիչ դատարանը, սակայն չնայած վերոգրյալին Վերաքննիչ դատարանը փոխարենը կիրառելու դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու իր լիազորությունը, կիրառել է դատական ակտը փոփոխելու լիազորությունը:

Ուստի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.02.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Զեկուցող

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ